«ՀԱՅ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԸ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ՝
(2001-2002 թթ.)
լույս տեսած գրքերն ըստ ծանոթագրությունների



ՊՐԱԿ 1

«Պրակն ընդգրկում է ակադեմիկոս Գ.Բ. Ջահուկյանի կենսամատենագիտությանը վերաբերող նյութեր: Ներկայացված է նաև երկու հրապարակում, որոնց հեղինակները հենվելով մեծ լեզվաբան-հայերենագետի հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումների և հայ բառբառագիտական պատմատեսական սկզբունքների վրա, քննության են առել հայոց լեզվի պատմության և հայ բառբառագիտության հետ կապված որոշ հարցեր՝ տալով նոր բացատրություններ ու մեկնություններ:»

ԳԻՐՔ I

«Ակադ. Ա.Ա. Աբրահամյանը հայտնի է գրական լեզվի բայակազմության, բայական կարգերի ձևաբանական հատկությունների քննությանը նվիրված իր հիմնարար մենագրություններով ու բազմաթիվ արժեքավոր հոդվածներով, գրաբարի բուհական ձեռնարկով, Եզնիկ Կողբացու և Ստեփանոս Օրբելյանի երկերի աշխարհաբար ընտիր թարգմանություններով:

Կենսամատենագիտական բնույթ ունեցող սույն գիրքը ընդգրկում է Ա.Ա. Աբրահամյանի՝ լրագրերում լույս տեսած հոդվածները և տարբեր առիթներով գիտնականի ու մանկավարժի դիմանկարը ներկայացնող նյութերը (ուղերձներ, հուշեր, նամակներ):

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում լեզվաբանի անձնական դիվնում պահված «Կյանքի լիրիկան» (բանաստեղծություններ), «Օրագրություն - Հիշատակագրություն» (թվով 71 գրառում), որոնք տպագրվում են առաջին անգամ:

Նյութերը խմբագրությանը սիրով տրամադրել են Ա.Ա. Աբրահամյանի դուստրերը:»





ԳԻՐՔ II

«Առաջին անգամ փորձ է արվում գրքի փոքր ծավալի սահմաններում ներկայացնելու Ս.Գ. Աբրահամյանի գիտական գործունեության հիմնական արդյունքները հայոց լեզվի, հատկապես ժամանակակից հայերենի կառուցվածքի բոլոր մակարդակների ուսումնասիրության բնագավառներում, ներլեզվական փոխհարաբերությունների, լեզվի զարգացման կանոնարկման տեսական ու գործնական հարցերի քննությունը, հայոց լեզվի ուսուցման ասպարեզում ականավոր լեզվաբանի ներդրումը (դասագրքեր, ձեռնարկներ, ծրագրեր և այլն):

Առանձին բաժնով տրված է մեծ գիտնականի կենսամատենագիտությունը, որն ընդգրկում է հեղինակի տպագիր աշխատությունների և նրա գիտական գործունեության վերաբերյալ գրականության ցանկերը:»

A.R.A.R.@